



Ի. ԵԿԱԼԵՐ

ԽԱՍԱՀԻ ՀԵՐՈՍՆԵՐԸ

ԴԵՏԾՐԱՏ

51 MAY 2010



ԼԵՆԻՆՅԱՆ
ԱՍԱԼԻՆՅԱՆ
ՀԵՐՈՍԱԿԻԱՆ
ԿԸՄՅԵՐԻ ՏՄԴՈՒԹՅԱՆ

XX
ԱՄՅԱԿԻՆ



Ի. ԵԿՈՒԵՐ

355.4

5-39

Վ. Մ.

ԽԱՍՏԱԴ ՀԵՐՈՍՆԵՐԸ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1939

APR 2013

41 570

կ հենակեր խասանի հերոսները.—Բրոցյուրը պատճեռմ և տուն-
ձեռնութեալ կարմրադրու և Հասուկ Բանակի կարմրու բանակային-
ների, հրամանտարների և քաղ-աշխատողների սրանչելի արիության,
տօկունության և հերոսության մասին, մոր գուցաբերել են նրանք հայ-
րենիքի պաշտպանության գիրքերում՝ 1938 թվի ոդուստուըն Խասան
լճի մոտ ճապոնացիների զեմ մզված մարտերի ժամանակ:

Այս բորչյուրի տեքստը «Վահենիդդատը» հեղինակից ստացել
ե բիլբայի սրատով՝ Խաբարովուից:

Լուսանկարները «Պատմա-յի թղթակից Վ. Տեմինց են:

Թարգման. Շ. Մանուկյան
Պատմագիր՝ Հ. Դոնոյան
Տեր Էմանուէլ Լ. Ունյան
Սրբադր Հ. Ա. Աղաբեկյան
Կոնտրոլ Արքակրիչ Ա. Շահբարդյան



1345

39

Գլամելի լիազոր՝ Վ. 2044. Հրատ. № 4786

Պատվեր 45. Տիրաժ 10,000

Թուղթ 62X94. Տպագր. 21/8 մամ.

Մեկ մամ. 25,000 նշան.

Հանձնած ե արտադրույան 7 հունվ. 1939 թ.

Ստորագրած ե տպագրության համար 26 հունվ. 1939 թ.

Գետհրատի 1 տպարան, Երևան, Լենինի 65

I

1938 թվի ոդուստույան մի առավոտ հեռավոր-արեւելյան
ճեպընթացը մոտենում եր Խաբարովսկին։ Յերկաթուղա-
գծից դեպի աջ ձգվում եյին մարդագետիններն ու մատ-
ղաշ անտառակները, դեպի ձախ՝ սովկաների ալիքաձև
շարքերը։ Այդ Հրեական Ավտոնոմ մարզն եր՝ Բիրոբի-
ջանը։

Գնացքն անցնում է ին կայարանը, իսկ մի քանի բոպե-
անց՝ Վոլոչական։ Այստեղ, Տունգուսկա գետի ափի մոտ,
ձախից յերեւացող Իյուն-կարան սովկայի վեշերի վրա,
1922 թվի դաժան ձմեռվա քամի, ցուրտ որերին կիսարո-
րիկ, վաստ հաղնված կարմիր բանակայիններն ու պարտի-
զանները զնում եյին վերջին և վճռական մարտի՝ սպիտակ
գվարդիականների և ինտերվենաների զեմ։ Բազմաթիվ
կարմիր մարտիկներ զոհվեցին այն ժամանակ այստեղ,
Իյուն-կարան սովկայի մոտ։ Բայց վոչ վոք չսար-
սեց, չնահանջեց թշնամուց։ Թշնամին ջախջախվեց և
հետ շպրտվեց։

Հենց այստեղ, Իյուն-կարան սովկայի գաղաթին ե գըտ-
նըլում խորհրդային հերոսների յեղբայրական գերեզմանը,
հերոսներ, վորոնք զոհվել են Վոլոչակայի համար մզվող
մարտերում։

Սովկայի գաղաթին գտնվող հռւշարձանը պսակված է
քանդակով կարմիր-բանակայինի կերպարանքով։ Նրա հա-

յացքն ուղղված ե դեպի արևելք... Հրացանը հորիզոնական դիրքով բռնած՝ նա կանգնած է այսպես, վոր կարծիս թե ամեն մի բոլոր պատրաստ և նետվելու թշնամու վրա:

1922 թվի հերոսական ձմեռը հայրենիքը պաշտպանող մարտիկի սիմվոլիկ կերպարանքը այժմ, 1938 թվի ողոստոսի այս նշանավոր որերին, հիշեցնում ե խորհրդային հզոր ժողովրդի անհողողող ուժի և նրա անպարտելի Կարմիր Բանակի մասին:

Դնացքը դպրում ե հսկայական կամուրջի վրայով անցնելիս, վորը գցված ե լայն և վեհապահ Ամուրի վրա: Դետի վրայով շոգենավեր են չեւմ: Բարձր ափի վրա յերեկում են քաղաքի շենքերը: Ծիսամ են Խաբարովսկի նոր գործարանների ծխնելույղները: Այստեղ ամեն ինչ ապրում ե խաղաղ, գործունյա կյանքով: Վոչ մի բան չի հիշեցնում այն մասին, վոր այդ ժամին մեր մեծ յերկրի հարավ-արեգելյան անկյունում, Խասան լճի մոտ համառ և արյունահեղ մարտեր են մղվում ճապոնական հափշտակիչների դեմ...

Մի ժամից հետո մենք ինքնաթիւով Խաբարովսկից առաջ ենք անցնում: Ինքնաթիւով պտույտ դորձելով բլուրների վրա տարածված քաղաքի գլուխն, Ամուրի և Ռուսուրիի լայն ժապավենի վրայով բարձրություն ե վերցնում և դընում և Խասան լճի ուղղությամբ: Բացի ուղելորներից, ինքնաթիւով տանում ե նաև «Տրեկողայի» այսորվա համարը: Այստեղ, առաջավոր դիրքերում թերթը կլողենչի և աւելություն կներչնչի մարտիկներին:

Ինչպես նկարագրել այն բոլորը, ինչ վոր տեսնում են, ինչով վոր ապրում են՝ յերբ նոտած են առաջ մարտերի վայրը թռչող ռազմական ինքնաթիւոի մեջ:

Դնդացը բարակ, փայլուն փողի հետեւում, մեր բըռ-

նած ուղղությունից դեպի հարավ, յերկնքի վրա յերեսում ե մի սպիտակ շերտ: Բնության քմահաճույքով՝ այդ փոքրիկ ամպերի միայնակ շարանը կանգնած է Ուսուրիի հովտի վրա, կարծես յերկնքի վրա նշանակելով յերկու աշխարհների սահմանները:

Մենք գնում ենք սովորականների վրայով: Ողային փոսերն ամեն բոլոր զգալ են տալիս իրենց մասին: Ինքնաթիւուր հարպիկ կերպով անցնում ե լեռնադադաթների միջից:

Սնմիջապես նրանց կողքին յերեսում ե Ուսուրիի տայգան, վոր տարածվում ե լեռների ստորոտներին: Լուս, անտարբեր, մեռած և թվում այդ տայգան վերելից: Սակայն տայգան ապրում ե, և այն ել՝ ապրում ե ականջները սրած, ինչպես խորհրդային յերկրի ամեն մի սահմանամերձ շըրջան:

Վերջապես հեռվում, չիկակարմիր և գուրս ցցված լեռների հետեւից յերեաց Խաղաղ ովկիսանոսի կապույտը:

Այստեղ արդեն զգացվում ե ոազմական գործողությունների ըրջանի մոտիկությունը: Ոգի մեջ պահակային ծառայություն կատարող ինքնաթիւոներ կան: Յերկնակամարի տակ թուշնում են թշնամուն հանդիպելու համար պատրաստ կործանիչները: Ահա մեր դեմ նետվեց նրանցից մեկը, սակայն ինքնաթիւոների թերթին տեսնելով խորհրդային կարմիր աստղերը, ճանապարհը շեղեց:

Ողանավակայան: Վայրեջք: Ծանոթանում ենք զինվորական ողաչուների հետ:

Նրանք հազնված են «մարտին պատրաստ» ձևով: Նըրանց մեքենաները վաղուց պատրաստ են: Ողը ճեղքելով՝ ամեն մի բոլոր կարող և գալարապատույտ վերև բարձրանալ աղղանշանային հրթիւոը: Այն ժամանակ մի կողմ կնետվեն շախմատի տախտակը, դեռ ամբողջովին

չկերած բորչչը և անավարտ կմնա հետաքրքիր զրույցը...
Կապույտ կոմբինեզոններ հաղած և կողքից ատրճանականներ կախած այդ յերիտասարդ, յեռանդուն մարդիկ տանջվում են մարտական հրամանի սպասումի մեջ:

Ցավոք սրտի, մեր ծանոթությունը կարճատե և լինում: Մենք նորից ոգումն ենք:

Աւզգություն ենք վերցնում դեպի այն ողանավակայաններից մեկը, վորտեղից ինքնաթիւնները թուչում են արդեն անմիջականորեն գրոհի՝ հակառակորդի վրա:

... Ներքեռում յերկում ե ժայռոտ ափերով ու քմահաճ ձևի կղղիներով ծոցը: Առաջին անդամ չէ, վոր ճապոնացիներն այստեղ պրովակացիաներ են սարքում:

Ահա այն ողանավակայանը, դեպի վորը ուշանում ելինք մենք: Մեր ինքնաթիւնը սահուն կերպով վայրեջք ե կատարում, իսկ այդ ժամանակ ողանավակայանից շարունակ թուչում են մարտական մեքենաները: Նրանք ուղերձում են դեպի Խասան լիճը, վորպեսզի ոմբակոծեն և դընդացրային կրակով հեղեղեն խորհրդային տերիտորիայի լիոի համբակիչներին:

Լովում ե, թե ինչպես հաճախակի աղմկում են թնդանոթները:

Ողանավակայանի վրա պտտվում ե ողային պահակախումբը: Սարայի կտուրի վրա, վորի ներսում, վաճառասեղանի մոտ աշխուժորեն առետուր ե անում «Վայենտորդի» աղջիկը, կանդնած ե մի կարմիր բանակային:

Նա հեռագիտակով ուշադրությամբ դիտում ե հորիզոնը: Այդ դիտողը զգուշավորություն ե հաղորդում ամբողջ շրջապատին: Յեթե չլիներ նա և մեկ ել թնդանոթների աղ-

մըկոցը, դժվար կլիներ հավատալ, վոր մենք ուղղմաճակատում ենք գտնվում:

Անցնում ե կես ժամ: Միքանի ինքնաթիւններ վերադան հերթական գրոհից: Նրանց դրությունը ստուգող ինժեները հանդիսավոր կերպով զբաղվում ե իր գործով: Նա հաղել ե պարուսինե նոր գիմնաստյորկա, նրա կոչիներն ու կաչե սունապանները փայլում են, դեմքը մաքուր սափրված է: Այն ժամանակ, յերբ նա տեխնիկների հետ միասին մեքենան ե դիտում, ողաչուները նպատակ են փայտե յերկար սեղանի շուրջը՝ ճաշելու:

Վերադարձածների մեջ ե գանձում ողաչու - կոմիսար ընկեր Ջլոյը: Նա նույնպես սեղան և նստում և ընդհանուր քրքիջի տակ պատմում ե, թե ինչպիսի խորամանկությամբ ի հայտաբերել ինքը ճապոնական զենիթային մարտկոցը:

— Յես տեսա վերջապես, թե վորտեղ եր թագնվածայն: Հետեւյալ թուչչըն նրան արգեն վերջ կլինի:

Մի ուղիւը պատմում ե, թե ինչպես հանկարծակի թուչելով և ուղղահայաց դիրքով հարձակվելով, նա արձիձե հեղեղ ե թափել ներքեւ և ճապոնական հետեակ զորքն ինչպես ե ցիր ու ցան յեղել...

Յերբ կործանիչները գնդացիրներից գնդակոծում են ճապոնական հետեւյակ զորքին, և ճապոնացիների զենիթային մարտկոցներն ինքնաթիւնների վրա կրակ են բաց ունում, տասնյակ արկեր պայթում են ողում:

Սակայն «Բաղեյիկները» (այդպես են անվանում այստեղ կործանիչներին) խորամանկ մանյուրով դուրս են դալիս զենիթային կրակի վոլորտից, նկատելով, թե վորտեղից են դալիս կրակոցները, և այնուհետև գրոհի յեն նետվում թշնամու մարտկոցի վրա: Հենց այժմ ել ահա նրանցից մեկը ևս գնդակոծված է գնդացրային կրակով:

Ճապոնացիներն արդեն սովորել են հարդել կարմիր «բազեյիկներին»: Յերբ նրանք թուչում են ճապոնական խրամատների կամ մարտկոցների վրայով, այստեղ, իրենց դասավորությունը չմատնելու համար, հաճախ կրակն ամբողջապես դադարում է:

— Մեղանից ամեն մեկը, — շարունակում ե իր պատմությունն ընկեր Զլոյը, — որական 6-7 թոփչք ե կատարում: «Բազեյիկները» իրենց խորամանկությամբ կատադրության մեջ են զցում ճապոնացիներին: Մեր քոլոր մեքենաներն անվնաս են, նրանցից վոչ մեկին վոչ մի կրակ չի դիպել: Դա բացարձում ե շատ հասարակ պատճառով. Հենց վոր ճապոնացիները կրակ են բաց անում, մենք գործադրում ենք տակտիկական վորոշ խորամանկություն, և ճապոնական զենիթայինների կողմից բաց թողնված արկերը մեր կողքից են անցնում...

Այսպիս՝ ճապոնական գիրքերի հերթական գրոհումից հետո հերոս-ողազուները նստած են սեղանի շուրջը, յերթային խոհանոցի մոտ և թեյ են խմում, մեծ ախորժակով վոչնչացնելով մրգի կոնսերվները և աշխուժորեն պատմում են միմյանց իրենց տպավորությունները: Պիլոտներից մեկը պլանշետից դուրս ե բերում քարտեղը և իր հրամանատարին պատմում ե ճապոնացիների վարպետորեն քողարկված մասին, վոր նկատել ե ինքը: Կես ժամից հետո մեքենան կարգի կրերվի, նրան կմատակարարվի ռումբերի ու փամփուշտների նոր պաշար, և կապույտ կոմբինեզոն հագած ողաչուն նորից կթռչի ողը, վորպեսզի վոչնչացնի մի մահարեր կրակային կետ ես:

Մանոթանում ենք կոմյերիտական պիլոտ Նիկոլայ Տերենտևիչ Ոմելչենկոյի հետ: Մի տարվա թոփչքային աշխատանքից հետո նա նշանակվել է Ապահովասի հրա-



Խասոն լնի մոտ տեղի ունեցած ժարակը մասնակիցներ—ողաչունոր (Ճապոնից աջ) տվյալը
իրայինան Պ. Յելիսեև, կապիտան Ն. Կուցենկոս, կապիտան Պ. Գանիչյան, ոգուշուն Ա. Յե-
րոբինը, կապիտան Ի. Յակովլյովն Եղանենիստ Ար Զորյ (1938 թ. ողովառություն):

մանատարի ողնական։ Արդեն վեց տարի յէ, վոր նա ողա-
չուի մարտական ծառայություն և կատարում ուղմական
ավիացիայի մեջ։ Վերջերս Նեկոլայ Տերենտիչն ընդու-
վել և կոմունիստական կուսակցության թեկնածու։ Իմա-
նալով, վոր մենք մայրաքաղաքից ենք յեկել, նա հարցերի
տարափ և տեղում մեզ վրա։

— Դե՛չ, պատմեցեք ի՞նչ կա այնտեղ, Մոսկվայում։
— Մոսկվան հույսը ձեր վրա յե դրել...

— Մե՞նք, ինչ... Աշխատում ենք ամեն կերպ, — պա-
տասխանում և նա ժպտալով։ ։ Եվում ենք ճապոնական
Հարձակվողներին։ Ախոս միայն, վոր իսկական ողային
մարտ չկա։ Զե՞ վոր վոչ մի ճապոնական ինքնաթիռ չի յե-
րեգում...

Ծիծալ, կատակներ։ Ողաչուների աչքերը փայլում
են, բոլորը գրբոված են, զգացվում և մեծ վողեվորու-
թյուն։ Նրանցից ամեն մեկը հպարտ և իր վրա դրված
խողը համար։

Իր թուիչքի մասին պատմում և լեյտենանտ կուկինը։
— Մեր արագածուիչ ոմբակոծիչները յերեսում են հո-
րիզոնի վրա և մարտական կարգով դեպի նպատակն են զը-
նում։ Ողն են թռչում յերեք հրթիռներ։ Այդ՝ աղդանշանն
է։ Միքանի բռպելից հետո կործանիչների ջոկատը, վորի
կազմի մեջ և մտնում նաև իմ ինքնաթիռը, արդեն սլանում
և՝ պահպանելու ողային սպառնալից եսկագրան։

Այժմ դեպի ներքեւ, ճապոնացիների վրա յեն թռչելու
ոռւմքերը։ Սարսափնի, վոչնչացնող ուժը նրանց մեջ և
զտնվում։ Յես ու ընկերս ոգի մեջ վորոնում ենք հակա-
ռակորդի կործանիչներին, բայց, ավա՞զ, նրանք չկան...

«Բաղեցիկները» վշտացած են։ Ինչպես յերեսում ե, այս
անդամ ևս չի վիճակվելու կովի բոնվելու ողային հակա-

ռակորդի հետ։ Կուկինի հետևից շարքի մեջ գնում են Վո-
րոնինն ու Ռուլինը։ Նրանք սպասում են աղղանշանի՝ թը-
նամու վրա հարձակվելու համար։ Սակայն ոգի մեջ հա-
կառակորդի և վո՞չ մի ինքնաթիռ չկա։

Մուռամ և վորոնել և դանել ճապոնական քողարկված
շենիթիկները։

Ոմբակոծիչները ուումբերի իրենց բեռը վայր են նե-
տում նախորոք նշված ճշգրիտ կետի վրա։ Հանկարծ կրակ
ու բաց անում ճապոնացիների զենիթային մարտկոցներից
շենիթիկների կուկինի ողակը, նկատելով կրակոցների բռնկումնե-
րը, հարձակվում և ուղղակի մարտկացի վրա։ Կուկինն, ա-
չա արդեն տեսնում և, թէ ինչորեւ խուճապի մատնված՝
թվերի մեջ են թաղնվում ճապոնական հրետանայինները։
Շունչը պահած՝ նա «վորոսում ե» նպատակը։ Ռումբերը
ներքեւ են թռչում և պայթում են, վոչնչացներով խորհրդ-
ուային յերկրի լիտի հափշտակիչներին։ Այսուհետեւ կործա-
նիչների յեռյակը կրակ և բաց անում զնդացիրներից
արձձե անձրեւ և թափում ճապոնական հետեակ զորքի վրա։

Հարվածը դերապանց եր արված։ Զենիթային մարտկո-
չը լուց...

Ողաչու ընկեր Գավրիլովին առաջադրանք եր տրված՝
զնդացնել հակառակորդի մարտկոցը, վորը խանդարում
մեր հետեւակի առաջխաղացմանը։ Յերբ Գավրիլովը մո-
ւացավ իր նպատակին, նրա ինքնաթիռի վրա կրակ բաց
արին թշնամու զենիթային թնդանոթները։ Նա արագու-
թյամբ մանյուք և կատարում, լինքնաթիռը փոխադրում ե
ուղղահայց գիրքի և կայծակի արագությամբ նետվում
գետնի վրա, միքանի հերթի կրակոցներ և տալիս գըն-
ե գետնի վրա, միքանի հերթի կրակոցներ և տալիս գըն-

անդամ ևս ուղարկում են նետում։ Այսուհետեւ Գավրիլովը

ուացրից և ուումբեր են նետում։ Այսուհետեւ Գավրիլովը

կոճության վոլորտից և նորից կրակելու դիրք և դրավում։ Հանկարծ նրա մեքենան ցնցվեց մոտիկ պայթյունից։ Պավրիլովը մի կողմ նետվեց։ Մի բովելից հետո անխոնջ և անվեհեր ողաչում արդեն գարձյալ յելման դիրքում և զտնվում և նորից կրակ և բաց անում։

Վերջիվերջո ճապոնական մարտկոցը լռեց։ Մենամարտից հաղթող դուրս յեկալ ստալինյան բաղեն։

Յերկու մարտական թոփքների միջև ընկած ժամանակամիջոցում հանդստացող ողաչուների ուրախ, անբանագոսիկ խոսակցությունը շարունակվում է։ Ողաչուները աղահորեն լսում են միմյանց, ծաղր ու ծանակի յեն առնում ճապոնական զենիթայինների «դիմուկ» հրածդությունը։

— Ե՛ս, թե վոր մեր ավելացիային թույլ տային ինչպես պետքն ե՝ այնպես աշխատե՞լ… — ասում ե եսկադրիլիայի հրամանատար կապիտան ընկեր Կուցենկոն։ Յեվնա խորհրդավոր կերպով ժամում ե, նայելով մեզ իր խելոք, կողած աչքերով։

II

Ճապոնական հափշտակիչներին առաջին հակահարվածը տվեց խորհրդային սահմանապահների առաջին ջոկատը՝ լեյտենանտ Խրիստոլյուրովի հրամանատարությամբ։

Հուլիսի 30-ին ճապոնացիները, վոր նախորդ որը գրուել եյին մեր սահմանապահ դիրքի վրա, կրակ բաց արին, զոր իմանան սահմանապահների ուժերի դասավորությունը։

Լեյտենանտ Խրիստոլյուրովի հասկացալ թշնամումանյովը և վորոշեց չափատարխանել կրակին։ Տասնհինգ

բովելից հետո կրակոցները դադարեցին։ Հուլիսի 31-ին, զիշերվա ժամը յերկուսին ճապոնացիներն այնուամենայնիվ հարձակվեցին ջոկատի ձախ թևի վրա։

Լեյտենանտ Խրիստոլյուրովն ինչ-վոր խշչոց լսեց։ Զայն տալով յեկողներին։ «Կանոն առ, ո՞վ ես», — նա նետեց մի լուսատու հրթիռ։ Հրթիռը բոցավառվեց, բայց վոչ մի բան չհաջողվեց տեսնել։ Խրիստոլյուրովը նետեց յերկորդ հրթիռը, վորի լույսի տակ պարզ կերպով յերեվացին ճապոնացիների սիլուետները։ Նրանք արդեն յերեսուն մետրի վրա եյին գտնվում սահմանապահների խրամատից և գնում եյին ամբողջ հասակով, խմբովին, առանց քողարկվելու։

Լեյտենանտ Խրիստոլյուրովը հրաման տվեց։

— Կրակ։

Սահմանապահներն սկսեցին ճապոնացիների վրա նըռնակներ նետել, խիել հրացաններից ու զնդացիններից։ Նոնակները նպատակին եյին դիմչում— դրա մասին կարելի յեր դատել այն ճիշերից ու իրարանցումից, վոր բարձրացրել եյին հարձակվող ճապոնացիները։

Այդ ժամանակ ճապոնական հրետանին նորից կրակ բաց արեց։ Խորհրդային սահմանապահների վրա արկեր թափվեցին։ Ահա նրանցից մեկը պայմեց հենց խրամատի մոտ։ Նրա բեկորները ջարդում են ձեռքի զնդացիրը, վերավորում են լեյտենատ Խրիստոլյուրովին, կրտսել հրամանատար Զերնոպյատկոյին և զնդացրորդ Զուեին։

Ճապոնացիները համարձակ դարձան։ Նրանք ուժեղացնում են ճնշումը, մի խումբ սահմանապահների վրա նըռնակներ են նետում, զնդակոծում են նրանց զնդացիներից։

Ճապոնացիների շարքերից բղավոցի ձայն ե լսվում։ «Ուր եք կրակում, ձերոնք են դակիս»։ Այդ բղավում են

ռուսերեն լեզվով սպիտակ-գվարդիականները՝ պլովկացի-
այի նպատակով։ Սպիտակ-գվարդիականները քիչ չեն ճա-
պոնական զորքերի մեջ։

Խորհրդային սահմանապահների այդ փոքրիկ խումբը
տոկունությամբ դիմանում ե ճնշմանը։ Նրանց գնդացիրնե-
րը հնձում ելին ճապոնացիների շարանները՝ մեկը մյուսի
հետեւց։ «Բնկեր Ստալինի համար, Հայրենիքի համար»
լողունկներով՝ մարտիկները մտան սլինային հակածար-
ձակման մեջ։ Նրանց առջևից դնում եր լեյտենանու Խրիս-
տոլութովվը, վորը արկի բեկորներից վերք եր ստացել
կլինի և կրծքի վրա։

Ճապոնական 400 զինվորներ հարբած բղավոցներով
հետ են վազում խորհրդային 70 սահմանապահների գրոհի
տակ։ Ճապոնական հետեւակը վախենում ե խորհրդային
սվիններից, թեև ճապոնական զինվորներին՝ քաջություն
տալու համար՝ տրված ե յեղել, ըստ յերկույթին, բավա-
կան մեծ քանակությամբ ողի։

Այդ գիշեր խիզախ սահմանապահները յերեք անգամ
հետ չպրտեցին թշնամուն, վորը, ողտվելով իր քանակական
դերազանցությամբ՝ աշխատում եր շրջապատել նրանց։
Լեյտենանու Խրիստոլութովվը, վոր մի անգամ ևս վիրա-
վորվել եր, արյունաքամ եր լինում, ժամանակ առ ժամա-
նակ կորցնում եր գիտակցությունը, բայց չեր հեռանում
իր պոստից։ Յերկու անգամ վիրավորված գնդացրորդ
Զուեի, սնայպեր Յեգորովի, գնդացրորդ Յերմոլաևի, Յի-
րինի, Պեշկովի և Խելենկովի գիտուկ գնդակներն անվրեալ
հնձում ելին ճապոնացիներին։ Անվեհեր կոմյերիտական
Լոբանովը, մի քանի վերքեր ստանալով՝ չեր թողնում
մարտական շարքը և վոչնչացնում եր թշնամուն, մինչեւ վոր
ճապոնական գնդակը կտրեց նրա կյանքի թելը։

Անհավասար կոիվը չարունակվեց մինչև լուսաբաց։
Փամփուշտների պաշարները վերջացան, սակայն ավագի ող-
նական կոմյերիտական Սլորողյուկը, վորը նույնական յերկու
անդամ վիրավորվել եր, սիրտ եր տալիս ընկերներին։

— Փամփուշտները վոր պակասեն՝ այն ժամանակ ճա-
պոնացիներին կիսեղենք ձեռքերով ու կծակծկենք սվիննե-
րով։

Միմիայն լուսաբացին յեկատ ողնությունը՝ լեյտե-
նանու Տերեշկինն իր մարտիկներով։

Ճապոնացիներն ուժեղացնում են հրետանային կրակը,
նրանց հետևակ զորամասը մոլեզնած՝ նորից առաջ և դա-
լիս։

ՅԵ Լեյտենանու Տերեշկինը սպառկում է հաստոցավոր դըն-
դացրի մոտ։ Զախից՝ թեքությամբ դրված ճարճատում ե
ճապոնական «Գոչկիսը»։ Տերեշկինը նրա վրա բաց ե թող-
նում յերկու հերթ կրակ։ «Գոչկիսը» լուսմ ե, սակայն Տե-
րեշկինին հայտաբերում և ճապոնական մի սնայպեր և կրա-
կում։ Լեյտենանուը վիրավորված ե ձախ ձեռքից։

— «Այդ բնայպերին հարկավոր ե վերացնել մեծտե-
ղից», — վճռում ենա։ Յեշլ յերբ մթության մեջ նորից
փայլեց կրակի բռնկումը, լեյտենանուը նրա կողմն ուղար-
կեց գնդացրային մի հերթ։ Ճապոնական սնայպերը հա-
վիտյան լրեց։

Նրանակի պայմթյունից գնդացիրը մի կողմ շպրովեց։
Տերեշկինի և մարտիկ Շմակովի վրա այդ նոնակը հող և
բեկրիներ թափից։ Տերեշկինի վիրավոր ձեռքը մի անգամ
ևս ուժեղ կերպով դաշտվեց, դիմնասայորկայի թելից սկսեց
արյուն հոսել։ Զախ ձեռքի մատները տրորվել են, չեն կա-
րողանում շարժվել։

— Ընկեր լեյտենանտ, դուք նորից վիրավորված եք...
առաջնապալի հարցնում եւ Շմակովիլը:

— Վոչի՞նչ, ավելի արագ քաշեցեք ժապավենը: Պետք
եւ կրակեմ մի ձեռքով:

Յել միայն յերրող վերքը, վորն առաջացալ պայթած
արկի բեկորներից, լեյտենանտ Տերեշլինին ստիպեց հետ
սողալ դեսպի փորակը: Այստեղ նրան տեսալ նույնութեա
յերք անդամ վիրավորված զնդայրորդ Ալեքսանդր Տարա-
մորինը:

— Թույլ տվեք, վոր ձեզ՝ ողնեմ,— ասաց նա և սկսեց
լեյտենանտի վերքերը կապել, բայց այդ ժամանակ պայթած
ճապոնական նոնակից մահացու վերք ստացալ հենց ինքը:

...Կրակի տակ, ժամանակ առ ժամանակ գիտակցու-
թյունը կորցնելով, արյունաքամ լինելով՝ լեյտենանտը ցած-
իջալ: Նա արգեն բալորովին թուլացել եր: Ընկալ... Տե-
րեշլինին փրկեցին այդ ժամանակ վրա վազած՝ ջոկի հրա-
մանատար Բատարչինը, կոմյերիտական կազմակերպի:
Նպեսիցեւ և վիրավոր մարտիկները: Նրանք վորոշեցին
ի՞նչ ել վոր լինի՝ իրենց լեյտենանտին հասցնել թիկունքը,
կամ զոհվել բոլորը միասին:

Այսպես՝ միմյանց ոգնություն եյին ցույց տալիս վի-
րավոր ընկերները: Գետի իրենց վիրավորները միանդամայն
այլ վերաբերմունք եր ցույց տրվում թշնամու մոտ: Վիրա-
վոր ճապոնացիները բղավում եյին, լաց եյին լինում, սա-
կայն նրանց վոչ վոք չեր փրկում, նրանց վոտնակուս եյին
անում հենց իրենց անհաջող, սարսափից խելադարված
զինվորները:

...Արևելքում արդեն բարձրանում եր բոսրագույն
արեր և ովկիանոսից հեռանում եյին ամպերը, յերբ մի պա-
տահական զնդակ դիպավ իր ստորաբաժանումին դեռևս

Հրամանատարություն անող լեյտենանտ Խրիստոլյուքովի
գլխին: Զդալով, վոր ուժերը դավաճանում են իրեն, ևս
էրամանատարությունը հանձնեց կրտսել հրամանատար Զեր-
նովյատկոյին և սողաց դեպի թիկունքը: Վիրակապման
կայանի վրանի մոտ ճապոնացիների պայթած արկի բեկորը
մի անդամ ևս վիրավորում եւ նրան:

Պրոֆեսոր Ախուտինը, վորը հենց այդտեղ, մարտի գաշ-
տում Խրիստոլյուքովի մարմնից հանել եր ոռումբերի բեկոր-
ները և զնդակները, հաշվել ե, վոր խիզախ լեյտենանտը
քառասուն վերք եր ստացել: Յել այնուամենայնիվ՝ Խրիս-
տոլյուքովն ապրեց: Նա արդեն գուրս ե զրվել հիվանդանո-
ցից և շուտով վերադառնալու յե իր զորամասը:

Լեյտենանտ Խրիստոլյուքովը, վոր Գորկու մարզի Պող-
դոբնոյե գյուղի գյուղացու վորդի յե, մինչև կարմիր Բա-
նակ մանելը փորսես խառասո աշխատել ե լիսվենսկի գոր-
ծարանում, Խասանի ամենաաչքի ընկող հերոսներից՝ մեկն
ե: Նա թեև յերիտասարդ ե, բայց իր ուսերին կրում ե
խորհրդային սահմանապահի հարօւտ փորձ: 1933 թվին,
յերը նա կրտսեր հրամանատար-սահմանապահների գորոցի
կուրսանտ եր դեռ, առիթ ունեցալ մասնակցելու դատարա-
նի գահլիճից փախած լրտեսին բռնելու գործին: Հեռավոր-
արևելյան սահմանի վրա նա ծառայում ե 1936 թվից: Յե-
րիտասարդ յեյտենանոտի սրատսես աչքը բազմիցս նկատել ե
ճապոնացիների ձկնորսական-լրտեսական գետանավակները,
վորոնք գաղտագողի մոտեցել եյին խորհրդային ափերին:

...Խրիստոլյուքովի կապավորը՝ մարտիկ Զախարովը՝
վիրավորվել եր ձեռքից ու վոտքից: Վիրակապության կա-
յանի ճանապահներին նա ստացել ե նորից հինդ վերք: Զկապ-
ված յոթ վերքերով (իր ունեցած վիրակապերի յերկու
անձնական փաթեթները Զախարովը գործածել եր ընկերնե-

րի վերքերը կապելու համար) կառավորը սովացել և դեպի թիկունքը:

Այդ ժամանակ հերոս սահմանապահների մի փոքրիկ խումբ, կատարելով հրամանատարի հրամանը, սովորայի լանջի վրայով իջակ ցած, դեպի իրենց վրանները: Տեսդուրեն մղվող մարտի ժամանակ նրանք վիրավոր Զախարովին չկարողացան տանել իրենց հետ; Նա պառկած մնաց խոտե՛ թշնամու դասավորման մեջ:

Զախարովն արյունաքամ լինելով վիրակապման կայանը հասավ չորս որվա ընթացքում՝ հուլիսի 31-ից մինչև ուղարկուսի 4-ը: Ճանապարհին նա վոճինչ չեր ուտում և չեր խըմում: Նրա վերքերն աջ ձեռքին ելին և մեջքի վրա: Նա ուժիղած եր լինում սովոր՝ իրեն առաջ հրելով ճախ ձեռքի արմունկով: Յերեկները պառկում եր խոտերի կամ յերկուպների մեջ: Շարժվում եր միայն զիշերները: Մի տաս մետր առաջ եր սողում և նորից հանդստանում եր: Լուսե եր, թե ինչպես ելին թուզում ինքնաթիւները, լսում եր հրաձությունը, զգում եր, վոր իրենից վոչ հեռու, ինչ-վոր մի տեղ մարդիկ են գանվում, սակայն վախենում եր ողնության կանչել, վորովհետեւ չգիտեր՝ իրենց կողմից ելին նրանք, թե՞ ճապոնացիներ... Գիշերը շան հաջոց եր լսում, բայց չեր վստահում իմաց տալ իր մասին: Ուզուսուսի 2-ին Զախարովի կողքին մի արկ պայթեց: Հոգն ու ընկորները նրա յերսին զարնիցին: -Մի գիշեր անձրև յեկավ: Զախարովը լեզվով խոնավություն եր հավաքում խոտերից, բայց չեր կարողանում ծարավը հաղեցնել:

Այսպես՝ նա հասավ մինչև լիճը: Այստեղ տեսավ մի նավակ և նստեց նրա մեջ: Խասան լճի լայնությունը մեկ էկուում երերից ավելի չե, բայց Զախարովն ամբողջ դիշերը նավարկում եր նրա վրա: Թիվավարելն ուղղակի տանջալից

եր: Զախ ձեռքի թափելով վիրավորված եր, աչ ուսի մեջ գլուխակն եր նստած: Նա ստիպված յեղավ թիվակը հրել յինթազատակներով: Վիրակապման կայանում զարմացել ելին նրա որդանիզմի դիմացկումության վրա:

III

Գրավելով Բեղվմյաննայան և Զառղերնայան, ճապոնացիներն սկսեցին ամրապնդել դրանք: Նրանք խրամատներ փորեցին, բլինդաժներ կառուցեցին, գնդացրերի համար բետոնե բներ սարքերին, յերկաթալարից արգելքներ շնեցին: Առաջին մասում լիճն եր, կողքերին՝ բլինդաժները գնդացրերի հետ: Ճապոնացիներն այլ յերկու սուպերաներն անառիկ ելին ուղում դարձնել: Սակայն Կարմիր բանակի զաշտային զորամասերը, զորոնք ուղստասուսի 2-ին մարտի մեջ մտան ճապոնատիւան հափշտակիչների հետ, դուրս քշեցին նրանց խորհրդային տերիտորիայից, և ջախջախիչ հարված հացնելով նրանց, Մոսկվայի ճապոնական գետպան Սիգեմիցուին հարկադրեցին խողել հաշտության մասին:

... Լուսարացին հրաման ստացվեց՝ զրավելու Պուտեմյունայա սովոր, վորին մեր մարտիկներն այդպես ելին անվանել այն պատճառով, վոր ճապոնացիներն այլ ուսպկան ծածկել ելին գնդացրային բազմաթիվ բներով: Վերեկից անտանելի կերպով այլում եր արկը, ներքեվից այլվածի հոտ եր զալիս, տեղ-տեղ այլումում եր արկերից խանձված խոտը:

Չորամասը ցրկեց փոքրիկ հովտում:

Ծարավը տանջում եր:

Թաղնվելով բարձր խոտի մեջ՝ մարտիկներն անաղմուն

սողացին դեպի սոսկայի հիմքը և կուտակվում ելին մի բնական փոսի մեջ:

Քաղղեկի տեղակալ Տիմոֆեյ Յակովլես հաստատուն կերպով սովում եր զորամասի կոմիսար Իվան Պոժարսկու հետեւց: Փոսի մոտ կոմիսարը և քաղղեկի տեղակալը նստեցին հանդստանալու: Հանկարծ փոսից քսան մետք հեռավորության վրա դանվող մի քարի տակից դուրս թռավ կորացած, վոչ յերիտասարդ ճաղոնական մի սպա՝ նոնակը ձեռքին: Այն ժամանակ կոմիսար Պոժարսկին բացականչելով՝

— Իմ հետեւց, Ստալինի համար, յերջանիկ հայրենիքի համար,— դուրս թռավ փոսից և առաջ վաղեց: Նա կրակեց և սպանեց սպային, բայց այդ նույն վայրկյանին ինքն ել վիրավորվեց վոտքից: Քաղղեկի տեղակալը կանչեց իրենց կողքից սողացող մարտիկին:

— Բնկեր Կաղոնցե, ողնություն ցույց տվեք կոմիսարին:

Կոմիսար Պոժարսկին, վոտքի վերքը կապվելուց հետո, կաղալով նորից առաջ դնաց: Յերկորդ գնդակը դիմավ նրա սրտին: Կոմիսարը մեռած վայր ընկալ:

Կարմիր բանակային Կաղոնցելը, վոր առաջնորդ նկատեց այդ, հասավ քաղղեկի տեղակալ Յակովլեսին և զեկուցեց.

— Բնկեր քաղղեկի տեղակալ, այդ սրիկաները սպանեցին կոմիսարին:

Յակովլես ցնցվեց այդ լուրը լսելով, սակայն շուտով ինքն իրեն հալաքելով՝ աղջու ձայնով հրաման տվեց.

— Բնկեր Կաղոնցե, առաջ:

Կոմիսարի մահվան լուրն արագությամբ տարածվեց մարտիկների մեջ:

Զորամասի մարտիկներն ինչպես հարկն եր՝ վրեժ լուծեցին սիրելի կոմիսար Պոժարսկու մահվան համար, վորը Մորդովական ԱԽՍՀ-ի Արդարական քաղաքի բանվորի վորդի յեր, շքանշանակիր և ճապոն-մանջուրական հարձակվողների գեմ կովել եր դեռ 1936 թվին:

Սրաի կակիծով և կատաղի ցասման մեջ առաջ եր շարժվում զորամասը սոսկայի լանջով դեպի վեր: Ժամանակը հոգեմաշ կերպով դանդաղ եր ընթանում:

Յակովլեսին թերից զեկուցում են՝ վիրավորված և ավագ լեյտենանտ Պոպովը: Յակովլես հետ և նայում: Պոպովը տարրորինակ կերպով թափահարում և ձեռքը և կաղալով ինչ-վոր մի կողմ և զնում, ցատկում և ճապոնացիների հենց նոր թողած խրամատը և թուլությունից՝ ուղղակի ընկնում և նրա մեջ: Բայց և այնպես՝ նստած դրության մեջ ևս նա շարունակում է հրամաններ տալ... Մարտիկները ճապոնացիների հետ ձեռնամարտի բանվեցին: Սոսկայի լանջի վրա տեղի ունեցած այդ կոմիտ ժամանակ զոհվեց կոմիերիտական լեյտենանտ Պոնոմորյովը:

Ճապոնացիները ցնցվեցին:

Նրանք արդեն հեռանում են, թաղնվում են քարերի հետեւմ, ընկնում են...

Քաղղեկի տեղակալ Յակովլես նոնակը ձեռքին՝ վազում և զեպի ճապոնական խրամատը: Հանկարծ նա նկատում է, վոր հետեւց դադապողի իրեն և մտանում ճապոնական մի սպա՝ մերկացրած սուսերը ձեռքին: Այդ դրության մեջ չի կարելի գոշել, նոնակով: Յակովլես պատգությամբ նոնակը ձախ ձեռքն և վերցնում, պատյանի միջից դուրս և քաշում ավտոմատ արձանակը և կրակում է: Սպան սուսերով «սըամարտելով» մեռած վայր և ընկնում:

Իսկ նրա կողքին լեյտենանու Ռւբեցկին կռվի ըոնվեց
որ ուրիշ ճապոնական սպայի հետ, վորը նույնպես ուղղ-
մականորեն թափահարում եր իր թուրը: Ռւբեցկին նրան
սովորեց սիլինով: Յերիտասարդ լեյտենանոր գեռ չեր հանել
սիլինը սպայի մարմնից, յեր նկատեց առաջից վաղող մի
ուրիշ ճապոնացու: Արագությամբ ձեռքից բաց թողնելով
հրացանը, Ռւբեցկին նրա վրա նոնակ է նետում...

Մարտիկները ճապոնական մի խրամատից դեպի մյուսն
ևն վազում: Զնայած կատաղի դիմադրությանը, թշնամին
ամեն տեղից դուրս է քշված:

Այսպես վերցվեց Պուլեմյուտնայա սովորան:

Յակովիկը բարձրահում և խրամատից, վոր տեսնի, թե
ինչպես են դասավորվել մարտիկները:

Առջեռում տարածվում է այն հողը, վորտեղից յեկել են
ճապոնական հավատակիցները — Տումեն-Ռուլան դետի հով-
տում գտնվող բանջարանոցները:

Բանջարանոցներում թագնվել են ճապոնական մի սնայ-
սեր: Նկատելով խրամատից գուրս նայող Յակովիկին,
ուս կրակեց: Յերիտասարդ քաղաքիստողը ցնցվեց, արագ
չուռ յեկավ և բերանի մեջ ինչ-վոր սարսափելի չորու-
թյուն զդալով՝ սկսեց դիմակցությունը կորցնել:

— Յակովիկ, ի՞նչ պատահեց քեզ, — կանչեց չոկի
հրամանատար Սեմովը և բռնեց վայր ընկնողին:

Արյունն արալությամբ լուրս եր հոսում Յակով-
իկ գիմնաստյորկայի միջից: Սեմովը քաշեց հանեց այն և
նրանով կապեց վիրավորի վերքը: Գնդակը դիպել եր թեհին
և ծակել եր կուրծքը: Վորոշելով, վոր վերքը մահացու յե,
ընկերները Յակովիկի վրայից հանեցին փաստաթղթերի
պայուսակը: Լեյտենանտ Ստացյուկը և զինագործ վարչետ
կուրովը դուրս բերին նրան խրամատից և զգուշությամբ

Նրա հետ միասին սողացին լանջով դեպի ցածր դեպի վե-
րակապման կայանը:

Քաղզեկի տեղակալ Յակովիկը, վորի կուրծքը գնդակը
ծակել և դուրս եր յեկել, այդ մարտի մեջ զոհված կոմի-
տար Պոժարսկու սաներից մեկն եր: Նա ծնվել էր 1914
թվին: Այդ նույն թվին նրա հայրը սպանվել եր գերմանա-
կան սպամածակատում: Վորը մնալով՝ Յակովիկը դառ-
տիարակվել եր մանկատանը: Այնուհետև նա կառուցել է
կամայի թղթի կոմբինատը, աշխատել և Սվերդլովսկում՝
Նիկոլայ-Խուտսովի դործարանում, տրանսֆորմատո-
րային պողպատ և գլանել: 1936 թվին գլանողը կանչվել է
կարմիր Բանակ:

Կոմիսար Պոժարսկին նրան սրտանց և ջերմորեն և դի-
մավորել: Յակովիկն իր կյանքում առաջին անգամ եր
ակննում հայրական քնքուչ փաղաքանքները: 1937 թվի
հունվարին Պոժարսկին յերիտասարդ մարտիկին ներդրա-
կել և կոմյերիտմիության շարքերը, այնուհետև առաջ է
քաշել և դարձրել քաղաքակալ: Յակովիկը վերջերս
կուսակցության մեջ եր ընդունվել:

Նրա յերաշխավորն եր կոմիսար Պոժարսկին:

Դեռ յերեկ եր, վոր Պոժարսկին Յակովիկի հետ միա-
սին լողանում եր Պուլեմյուտնայա սովկայի մոտ գտնվող
վոքրիկ լճում: Դեռ յերեկ եր, վոր կոմիսարը յելույթ ու-
նեցալ միտինդում, մարտիկներին կոչ անելով մրցման մեջ
մտնել միմյանց հետ՝ սովկայի դադաթին կարմիր դրո-
շակն ամրացնելու իրավունքի համար: Գիշերը, զրոհի
նախորյակին, կոմիսարը Յակովիկի հետ գնացել եր ստու-
դելու զորամասերի դասավորությունը:

Այդ գիշեր կոմիսարի ասած վերջին խոսքն եր՝

— Դեմ, առավոտը մենք մարտի մեջ կլինենք...

Յակովի առողջանում ե, նա ապրելու յե, նա մինչեւ
կյանքի վերը մնալու յե Կարմիր Բանակում: Նա կիսա-
սինի սիրելի կոմիսարին...

Զառողիքնայա և Բեղլիմյաննայա սովորակաների մոտ, Խա-
ւան լճի շրջանում տեղի ունեցած այդ գրոհների ժամա-
նակ Կարմրադրոց: Հատուկ Բանակի բոլոր մարտիկները,
վորոնք այլպում եյին խորհրդացին հողը պղծող ճապոնա-
ցիներին վոչչացնելու կրքոտ ցանկությամբ, միմի հերոս-
ներ եյին:

Ահա! լեյտենանու Գոգուան, զնդի գոլրոցի դասակի
հրամանատարը: Վեցտասյա անջառումից հետո նրա մոտ՝
Հեռավոր Սրեելք և յեկել իր ընտանիքը: Ավարտելով իր
աշխատանքի լարված որը, նա շտապում եր տուն, վոր-
պեսդի վորքան կարելի յե՝ շուտ տեսնի կնոջը և պատիկ
սոլջկան: Կոմյերիտական-լեյտենանուը գեռ չեր վարժվել
հոր գերին, սակայն նա այդ բանին այնպիսի լրջությամբ
եր մոտենում, ինչպես վոր հրամանատարի պարտականու-
թյուններին, վորը նույնպես գեռ նոր բան եր նրա հա-
մար: Բնդամենը կես տարի առաջ, ավարտելով հետեա-
կային դպրոցը, նա Անդրկովկասից յեկավ Խաղաղ ովկիա-
նոսի ավել, իսկ նրա դասակն արդեն մարտական և քաղա-
քական պատրաստության տեսակետից որինակելի դասակ-
նութիւն ե դարձել և զնդի մեջ առաջին տեղն ե դրա-
վել մարտական լիակատար հանդերձանքով արագ անցում
կատարելու գծով:

Լեյտենանու Գոգուայի բնակարանում սովորաբար պա-
տուհաններն ամբողջովին բաց եյին լինում ամբողջ գիշե-
րը:

Առավույյան դեմ մոտիկ ովկիանոսից շարժուակ առաջ

Եյին շարժվում գեղնազույն, փխրուն ամպերը, տան մեջ
թեթև քամի յեր շարժվում: Այդ թարմ, վաղորդյան ժա-
մին բարձր ու պահանջկոտ ճիշով արթնանում եր վորքիկ
թամարան: Ալեքսանդր Գոգուան վեր եր թուչում անկողնից
և որորում աղջկան: Այդ վայրկյաններին նա շարունակ
մտարերում եր Զումաթի գյուղը, թեյի պլանտացիաները
և մանղարինի այդիները: Հարազատ Վրաստանում արդեն
վոսկու նման գեղնել եյին մանղարինի հասած պտուղներով
ծանրաբեռնված ծառերը, իսկ Ստալինի անվան կոլտնտե-
սության թեյի պլանտացիայի վրա մի թեթև, թափանցիկ
մշուշ եր կանդնում: Սև ծովից նույնպես առավտներն
այնպիսի զով եր գալիս, ինչպես այժմ զալիս և Խաղաղ ով-
կիանոսից:

Ահա այսոր ել, լուսաբացին, յերբ յերկնքի վրա լողում
եյին ծագող արեկից ներկված փխրուն ամպերը, Ալեքսանդր
Գոգուան վեր թուավ անկողնից: Նա վաղեց աղջկա փոքրիկ
մահճակալի մոտ: Թամարան քնած եր մանկական անվրդով
քնով: «Իսկ ինչո՞ւ յես դարձնեցի», — յերկմտությամբ
հարցնում ե ինքն իրեն լեյտենանուը: Բայց այդ ժամանակ
պատուհանի այն կողմից լսվում են ծանր և արագ քայլե-
րի ձայներ, և ահա արգեն ուղղակի տան առաջ զինքում
և փողի մաքուր, ընդհատ ընդհատ լսվող ձայնը:

— Տաղնա՛պ:

Ալեքսանդրը շտապ-շտապ հաղնվում է, վերցնում և
զարտացին պայուսակը քարտեղների հետ միասին և դուրս
և վաղում փողոց: Բաց ու խուփի են լինում գոները, սան-
դուղքների վրա վոտնաձայն և լսվում: Հրամանատարները,
քաղացիասոոյն երը շտապում են իրենց ստո, աշուա-
նումների մոտ, վորոնք մարտական լիակատար հանդեր-
ձանքով շարժում են հրամարակի վրա: Լեյտենանու Գո-

գուան հեռվից նկատում ե իրենց մարտիկներին— Նուր-
պիսովին, Սիլակին, Սերգուչեին և մյուս կոմյերիտական-
ներին: Նրանք միշտ առաջինն են յեղել ուսման մեջ, առա-
ջինն են և՝ այստեղ՝ խակական մաբտական տադինապի այս
անկրկնելի բոսկեյին: Քաղբաժնի պետը շարված մարտիկ-
ներին և հրամանատարներին հայտնում ե, վոր Խասան լճի
շրջանում ճապոնական հափշտակիչներն անցել են սահմա-
նիր: Շարքի մեջ գտնվողներից մասն մեկը հասկանում է
մումենորի լըջությունը, ամեն մեկը պատրաստ և ապա-
ցուցելու իր նվիրվածությունը հայրենիքին, Լենինի-Ստա-
լինի կուսակցությանը, խորհրդային կառավարությանը:
Հրամանատարներն ու քաղաշխատողներն արագությամբ
հրաժեշտ են տալիս իրենց ընտանիքներին: Ալեքսանդրը
մի հայացք զցելով տանից գուրա յեկող իր կնոջ ու աղ-
ջըկա վրա. սրագությամբ զնաց զեկի ավտոմեքենաները,
փորոնց մեջ ելին նստում իր դասակի մարտիկները:

... Հեռվից յերկաց Խասան լճի նեղ ու յերկար շեր-
տը: Նոր հետեւում՝ կանաչ թիուտներով ծածկված Զառ
կերնայա սովորական ե: Պարզ ու հանդիսատ դիչեր եր. Ալեք-
սանդր Գոգուայի դասակը գրավեց իր տեղը: Մարտիկ.
ներն աչքերը հառել են թանաքի նման սև խալարին: Լուս-
ատու հրթիռները մի վայրկյան լուսավորում են վայրը,
և այն ժամանակ յերեւում են մարդկանց սիլուետները:
Ճապոնացիներն աշխատում են գրոհի անցնել: Զեռքի
գնդացիքները հնձում են նրանց: Լուսաբացի մառախուզի
մեջ յերեւում ե, թե ինչպես ճապոնացիները լանջի վրայով
ներքե են գլորվում և վալում են իրենց տերիտորիան, իսկ
վորոշ ժամանակից հետո նորից յերեւում են:

Մինչև լուսաբաց Ալեքսանդր Գոգուայի դասակը հետ
մզեց ճապոնական հափշտակիչների մի քանի դրոհները:

Առավոտյան գնդացիքների ճարճատյունին ավելանում են
հրետանու թնդյունները: Ճապոնացիներն սկսեցին խորհր-
դային տերիտորիան գնդակոծել ծանր թնդանոթներից:
Արկերը խիտ փալում են խորհրդային մարտիկների չուր-
ջը, սակայն լեյտենանու Գողուայի գասակը, կտրելով հա-
վուցտակիչների ուղին, խրամատներ և փորում և ամրանում
սովորայի հարավային սարուսի մոտ:

Ճապոնական հետեւակը նորից հարձակման և անցնում:
Գոգուայի ստորաբաժանման դիմ ճապոնական սպաները
նոր շարքեր են քչում մեկը մյուսի հետեւից: Գնդացրույնն
կրակի տակ շարքերն արագությամբ նոսրանում են: Ճա-
պոնացիների դիակները ծածկում են սովորայի լանջերը:
Վերջիվերջո՞ դիպուկ կրակոցները շփոթության մեջ են
զցում դրոհների շարքերը: Ճապոնացիներն անկանոն
կերպով հետ են սահմանջում:

Չորս ժամ տեսող կատաղի կովից հետո լեյտենանտը
հրաման ստացավ նոր սահմանի վրա փխաղը վելու մա-
սնին: Անցումն ապահովում եր իր կրակով հերոսական
գնդացրուդ Միլովանովը:

Մկովեց հրետանային և գնդացրային մենամարտը:
Ոորհրդային հրետանին ցուցադրում եր իր կրակի զարմա-
նակի կերպով դիպուկ մինելը: Լեյտենանու Գոգուան տե-
սակ, թե ինչպես խորհրդային հրետանավորների առաջին
լսկ կրակոցներից հետո՝ թիկրի մեջ քողարկված ճապո-
նական հրանոթը ողբ թռավ անիմեները դեպի վեր: Բլին-
դամիները քանդվում ելին, մեկը մյուսի հետեւից լուսում ելին
ճապոնացիների գնդացիքների բները:

Յերեան յեկալ խորհրդային ավլացիան: Ալեքսանդր
Գոգուան յերեւք չի մոռանա այդ վեհապանծ տեսարանը:
Ամպերի խիտ շերտերը ճեղքելով՝ ինքնաթիռները ոմբակո-

ծում ելին ճապոնական դիրքերն այնքան դիպուկ կերպով,
զոր ցնծություն ելին առաջացնում մեր մարտիկների մեջ:
Պայտյունների փոքրիկ ամպիկները հաճախակի յերեսում
ելին յերկնքի վրա: Դրանք ճապոնական զենիթիկներն ելին,
զոր ապարդյուն կերպով զնդակոծում ելին խորհըր-
դային ինքնաթիւնները: Ռումբերի սպայթյունները դղրդալի-
արձագանքում ելին շրջակա սովորականերում: Սև ծուխը
խառնվում եր հողի հետ: Պայտյունների սյունները բարձ-
րանում ելին հարյուրավոր մետր բարձրության վրա: Զա-
ռողերնայա սովորական սպարություն եր խավարի մեջ: Այն
տախտակները, վորոնցով ամրացված ելին ճապոնական
բլինդաժնները, հրանոթների անիվները, մարդկային
էլերաբանաֆններն ողն ելին թուչում: Հեռավիտակով յերե-
վում եր, թե ինչպես ճապոնացիները հեռանում ելին ի-
շենց ամրություններից և սարսափած ցիր ու ցան ելին
լինում:

Հրանոթները դղրդում ելին, ռումբերը նետվում, մի
լինչվոր տեղ, կողքին, հոնդում ելին տանկերը, ողի մեջ
և գետնի վրա անընդհատ և հաստատուն կերպով դործում
եր Խորհուրդների յերկրի մարտական տեխնիկան:

Միքանի ժամկից հետո Զառողերնայա սովորական, նրա կա-
նաչ, ձվաձև դադաթը չեր կարելի ճանաչել.— կենդանի,
հյութալի գույնները չքացել են, մերկացել և լեռան մեռած,
ժայռոտ մարմինը:

Հասավ փոթորկալի ողով արբեցած՝ հակահարձակ-
ման վճռական ըուղեն: Ամեն մեկն զգում եր նրա հանա-
կալիությունը: Խրամատներում, թուուցիկ միտինդներում
կոմունիտներն ու կոմյերիտականները, կուսակցական և
վոչ կուսակցական բոլշևիկները յերդվում ելին դուրս
վոչ կուսակցական հողից լիտի համբակիչներին: Զա-

րամասերը հարձակման ելին գնում, սոցիալիստական մըր-
ցություն հայուարելով Զառողերնայա սովորակի դադա-
թին կարմիր դրոշակն առաջնը ամրացնելու համար: «Է-
ռաջ, հայրենիքի համար, Լենինի-Ստալինի գործի համար»
բացականչություններով մարտիկները նետվեցին գրոհի:
Զուր ելին դիմադրում ճապոնացիները: Առանձին ճակա-
տամասերում կոխվը ձեռնամարտի յեր վերածվում:

Ահա վիրավորված ե վաշտի հրամանատար ընկեր
նարսովը: Կոմյերիտական Գողուան իր վրա յե վերցնում
վաշտի հրամանատարությունը: Նա գնում ե իր մարտիկ-
ների առջելից: Հրետանային և գնդացրային ուժեղ կրակի
տակ վաշտն առաջ ե շարժվում վորակի միջով: Համանելով
սովորակի ստորոտին, վաշտը պառկեց՝ սպասելով հետագա
գրոհի համար արվելիք աղդանանին: Փորակի վրայից
վարելու ընթացքում Գողուան ընկավ գետնի վրա, վորպեռ-
դի սողալով անցնի ամենից ավելի շատ գնդակոծվող ճա-
կատամասը, բայց նրա ձախ վոտքը հանկարծ սկսեց
չհպատակվել տիրոջը: Լեյտենանտն զգաց, վոր իր կոշիկը
լցվել և տաք արյունով:

Մարտիկներից մեկը զգուշությամբ դուրս քաշեց կո-
չիկը հրամանատարի վոտքից և վերքը կապեց: Վիրավոր
Գողուան շարունակում եր առաջ սոլա՛ իր վաշտի դլուխն
անցած:

Յերբ շատ արյուն կորցնելուց լեյտենանտ Գողուայի
ուժերն սկսեցին դավաճանել, նրան զգուշությամբ տարան
վիրակապման կայանը: Այսեղ նա իմացավ, վոր Զառ-
ողերնայա սովորական նորից խորհրդային ե դարձել:

Լեյտենանտ Ալեքսանդր Գողուան մտածում եր այդ
բոլորի մասին, հիանալով պատուհանից յերկացող Խաղաղ
ովկիտնոսի կապույտ, անծայրածիր հարթությամբ, վո-

րը նրա՝ վրացի կոմյերիտականի համար նույնքան թան-
կալին և հարազատ եր դարձել, վորքան և նրա հարազատ
Աև ծովը:

Ողոստոսի Յ-ի առավոտյան, այն վաշտը, վորի հրա-
մանատարն եր լեյտենանտ Ալեքսանդր Սադովսկին, պետք
է զբոհեր Բելլմյաննայա բարձունքի վրա գանվող անտա-
ռակի վրա: Այլտեղ թագնված եր ճապոնացիների հրետա-
ռային մարտկոցը: Վաշտը, վոր վաղուց արդեն մարտական
հրամանի յեր սպասում, առաջ շարժվեց մի տափարակ,
ճահճու վայրով, վորի վրա ցածր յեղեցներ ելին բուսել:

Յերբ ճապոնացիները հրետանային և զնդաշրային
մրրկային կրակ բաց արին, վաշտը բաժան-բաժան յեղալ,
և մարտիկները մինչև ծնկները ջրի մեջ խրված՝ շարու-
նակեցին խիզախորեն առաջ շարժվել:

Ճանապարհին նրանց մի լիճ ողատահեց: Փոքրիկ, ան-
նշան մի լիճ, բայց վորքան տանջանքներ պատճառեց նա
ճարտիկներին:

Վոչ մի կողմ չեր կարելի շուռ դալ — և աջից, և
ձախից հակառակորդի կրակն եր վալիս:

Լեյտենանտ Սադովսկին վորոշում ե ընդունում՝ մտնել
ջնի մեջ և սպասել, մինչև վոր կրակը դադարի:

Մարտիկները մտնում են լճի մեջ: Զուրը մինչև
կուրծքն ե հասնում, չորս կողմը խիստ յեղեցն ե, ճահճա-
յին հատակն իր մեջ է քաշում վոտքերը, մոծակներն ան-
տառիկ կերպով կծում են: Վորպեսզի մարտիկները չեր-
պեն ճահճի մեջ, լեյտենանտը նրանց հրամայում և շարժ-
վել, վոտքերը փոխել, չմնալ մի տեղում կանգնած: Այդ
վել, վոտքերը փոխել, չմնալ մի տեղում կանգնած: Վա-
համանը չըուկով մարտիկները մարտիկ ե հաղորդվում:

Ծարավը տանջում է. հրամանատարը հրաման է տվել՝

Վոչ մի դեպքում չխմել լճի ջուրը, քանի վոր այդ ջուրը
վարակված է դիակներով: Դրանք դժոխային տանջանքի
ժամեր ելին: Մարմնի վրա մոծակի կծոտելուց ուռուցքներ
առաջացած, քաղցած, ծարավից տանջված մարտիկները
մինչև կուրծքը կանգնել ելին ջրի մեջ, և նրանցից
վոչ մեկը չընկճվեց հողնածությունից: Այդ փորձու-
թյանը զիմացան բոլորը: Վաշտն այդ դրությամբ կանգնած
մնաց մոտ չորս ժամ:

Յերբ ճապոնացիները, չնկատելով մեր մարտիկներին՝
սկսեցին փախչել և մյուս կողմն անցնել, վաշտի հրամա-
նատարը հրամայեց կրակ բաց անել ձեռքի զնդաշրայից, գլո-
ւացիրը գնելով մարտիկներից մեկի ուսերին: Նա թույլ
չտվեց հրացաններից կրակ բաց անել, լճի կողմից լսվող
խմբական կրակոցը թշնամուն իմաց կտար վաշտի դասա-
փորության մտալին:

Պետի ողնական Մելնիկովը, վորը միշտ աչքի յեր ընկ-
նում իր հնարագիտությամբ ու հասկացողությամբ, հրա-
ման ստացավ թիկունք գնալ՝ փամփուշտներ բերելու: Առա-
ջադրանքը շատ վտանգավոր եր, բայց Մելնիկովը ձեռքը
գնելով գլխարկի հովարին (կօչիք) և հրամանը կրկնե-
լով՝ հանդիսաց շուռ յեկավ և ուղկորդեց ճապոնացիների
կրակի տակ ընկած ճանապարհով: Թրջված, ամբողջովին
ցեխի մեջ կորած՝ նա անհետացավ յեղեցների մեջ, իսկ
մի ժամից հետո վողը ու առողջ վերադարձավ՝ փամփուշտ-
ների մեծ պաշարով:

Մարտիկներն սկսեցին անհամբերության նշաններ
ցույց տալ:

— Ընկե՛ր հրամանատար, բա յե՞րբ ենք առաջ շարժվե-
լու:

— Մի՛ շտապեք, ընկերներ՝ պատասխանում եր Սա-

դովիսկին, — դեռ շարժվելու ժամանակը չե, հարկավոր և
սպասել:

Այրող, տեղի ունեցող անցքերի նկատմամբ անտարբեր
տրել թեքլում ե դեպի մայրամուտ: Ճապոնացիների
կրակը մի փոքր լուս ե:

— Առաջ, — լվացում ե վերջապես յերկար ժամանակ
և լվացող հրամանը:

Մարտիկները դուրս են գալիս լճի դեմացի ափը, սո-
րում են...

Ընկեր Պոտանինի ջոկը նույնպես ստիպված յեղակ
հարձակվել ջրային տարածության միջով: Բանն այսպես
էր: — Հակառակորդը մրրկային կրակի տակ եր պահում
Զառողելնայտ սովորայի տակի մասում գտնվող ցածրադիր
վայրերը: Մեր զորամասերը չկարողացան առաջ շարժվել:
Գոտանինն առաջադրանք եր ստացել վոչչացնել հաստա-
տուն կերպով դարան մտած ճապոնացիների կրակային կե-
տերը:

Քանի վոր վայրը բաց եր, Պոտանինը վորոշեց առաջ
զնալ Խասան լճի փոքրիկ ծոցի միջով: Նրանք մինչև ափը
սողալով անցան և ընտրելով անցման համար մի հարմար
վայր, մտան ջրի մեջ: Պոտանինը խորամանկության դի-
մեց: Նա թագնվեց ջրի մեջ, այնպես վոր ջրի յերեսին
դուրս եր ցցված միայն սովորաբարը: Մարտիկները հետե-
ղեցին նրա որինակին: Ճապոնական զնդակները կարկուտի
նման թափում եյին, բայց քիչ կարողացան վնասել Պո-
տանինի ջոկին: Դուրս դալով դիմացի ափը, մարտիկները
հարմար տեղերում ամրացրին իրենց զնդացիները, և
կրակ բաց անելով՝ վոչչացնելով ճապոնական յերկու
զնդացիր, հարկադրեցին լուել թնդանոթներից մեկին, վո-
րը կրակում եր մեր զորամասերի վրա:

Վրա հասավ գիշերը: Մարտիկների մի խումբ, վորի
հրամանատարն եր կրասեր հրամանատար-կոմյերիտական
Ֆյուլոր Պրոնինը, մասնակցում եր գիշերվա գրուին: Զնա-
յած հակառակորդի ուժեղ կրակին, Պրոնինի խումբը մոտ
սարածության վրա մուտքավ ճապոնական բլինդատին,
վորից դուրս եյին թուզում ձեռքի նոնակները: Զախից,
լանջի կողմէից, վայլվելով կրակի բռնկումներից, կրակում
եր ճապոնական զնդացիրը: Գնդակները վշշում եյին ժայ-
ռերը, այս ու այն կողմէ ցրելով խիճն ու ավազը: Փոքրիկ
քարերը գիպչում եյին մարտիկների գեմքերին:

Ճապոնական բլինդատը հաստատուն կերպով եր կա-
ռուցված: Այսուղ նստած զինվորները վստահություն ու-
նելին իրենց նկատմամբ: Պրոնինի խմբի համար գժվար
եր այդ բլինդատը գրավելու: Անախորժություն եյին պատ-
ճառում մահավանդ նոնակները: Գիշերային խավարի մեջ
հարավոր չեր վորոշել, թե վո՞րաեղից են նետում այդ նըռ-
նակները:

Այն ժամանակ Պրոնինը և զնդակի տեղակալ Մանինը
վորոշում են՝ ինչ զնով ել լինի՝ հասնել ճապոնական նըռ-
նակաձիգներին և վոչչացնել նջանց: Խիզախները սողա-
ցին գեզի առաջ: Մանինը կրակը բաց եր թողնում հաստո-
ցավոր զնդացիր վրա, խակ Պրոնինը լավ նայելով մթու-
թյան մեջ և վորոշելով նոնակների նհաման տեղը, այսուղ
եր ուղարկում իր գեսուկ զնդակները:

Եերկու խիզախները դրանով տարված, գաղտագողի
կերպով ավելի ու ավելի մոտենալով՝ չնկատեցին, թե
